



217. ԽՈՐԱՄԱՆԿ ԿԻՒԾ

Մի անգամ ինչպես ապատահում, մըն մարթ ումենում ամըն սատանա կնեկի, էտ կընեկըտ տեսնում ա իլի, վեր ուրան մարթը մըն նոխտ եղն օնի, քյընում ա վար անում, տես անում, տես անում, վերշապես ապրում էլի, մին կերպ կընթիզ զոլամիշ անում, ինքյն էլ ուժեղ անգրագյետ մարթ ա ինում, վել մին տառ-պան, տես-տես գյիղալիս չի ինում։

Էտ կընեկտ ասում ա.—Ա՛ մարթ, դե վեր տհենց ա, տու ամման տարի իսկի պատառ առաջ շես քյիննում, ես քե մատաղ, եք տու աղեր տառ, տերտեր իլի, լիճա տառ, լիճա էն է, վեր հըրևան կնդանը մարթն էլ ա աղեր տառալ, հարըստոթյունին տեղ ու գմադար չի կա։

Ասում ա.—Ա՛ կնեզյ, սարսաղ ե՞ս, կյիժ ես, վել ես ռշայր մերշ-ն եմ գյուղում, վել ալիփապեն եմ գյուղում, ես հո՞նց կարամ տերտեր տառնամ։ Թա պահ, քո տոնը շինվի, կըրալու շը՞ս մին էրկու հատ ալելլու ասե՞ս,

Վերլը, էտ կընեկըտ սատանա կնեկ ա ինում իլի, տանում ա եղանը մընը ժախում, զդերին հետի մըն փափաղ են առնում, մըն էլ մըն փարաջա, վեր էտ աղերըտ իփր թե քյի մեշկը, տառնա աղեր, քյինա օրիշ տեղ ըդըրոթուն անի։ Ուրանց գյուղում կարալ լի, լոխունքն էլ ճընանշում են, վեր սա անգրագյետ աղեր ա։

Վերլը, շատ ա քյըննում, թիշ ա քյըննում, էտ թող քյինա, խարարը տանք, վեր մին օրիշ գյուղում էլ մի աղեր մեռած ա ինում, Պիրում են ժուղովուրթը, քյոխան-պանը հըվաքվում են, վեր եկեքյ դարկենք, տեսնանք վեր գյուղում էրկու աղեր կա, մընը պիրինքյ մեղ մոտ ըդըրոթուն անե, ախեր գյուղը առանց տերտերի

Հեարավոր շի, Վերլը, տրանք դիլիգատ են զարկում էրկու հոքի, կյամ են: Եսատ են կյամ, թիշ են կյամ, տեսնում են ձընըպին մին տերտեր կլիսուլեր քյումնում ա:

Կյամ են ասում, օրհնյա գերց: Դե հինչ պիտի ասե, խելքը կորում շի, վեր ասե շաստված օրհնեա: —Մեր գլուխի գրությունից վել մին գաղափար շի կա, —ասում ա: Ասում են թա՝ թոռն ես քյումնում:

Ասում ա: —Քյումնում եմ տեսնամ հիշտե՞ղ ադեր շի կա, ընդեղ ըգըրոթում անեմ:

—Թա, քու հար լիւա տեռնա, էտ լիհա լավ տառավ, եք տեսնամ, էտ լիհա մեր կործն ա, մեզ զարկալ են էտ կործավլըտ:

Եր են օնում, վերշապես էտ անգրագետըտ պերում, տանում գյուղը, գյուղին մղակավը վեր մտնում ա, քյոխվան-պանը, աղսախկալնին կյամ են մոտեկանում, բա վեր վերշը, աղերին ընթունին էլի պազմով: Պիրում են էտ ադերին ժուղովուրթը վերդեղ վեր հըվաքվում ին, հին ժամանակ տրան թոփիսանա ին ասում, էտ թոփիսանի մոտ ասում են: —Ա՛դեր, հինչ ե՞ս ըռնելու տարեկան մըզանա, վեր մըզետի ըգըրոթում անիս:

Թա ասում ա: —Դե հիշքան ծեր ադերն առալ ա, էնքան:

Թա ասում ա: —Մեր ադերը տարեկան վածում փութ հատիկ էր ինք օնում, եթե քու սասըտ լավ ինի, քեզ ութասուն կըտանք:

Թա ասում ա: —Տուք եք գյուղնում: Դե եկեղեցուն զանզը քաշում են, մհենգ սա տանում են վեր սաքըի քյինա աղոթքն անե: Դե հիշտեղան ա՞յլուրնում աղոթքը, նափան կա՞ սրանում, վեր աղոթքն անե, վել տառ ա գյուղնում, վել պան: Պնդրնում են ավետարանը տինունին էլ շի գյուղնում: Վերլը, սա մին էրկու հետ ալելու յա անում, ժուղովուրթն ասում են: —Դեւու ա, աղորը խոսկերթը կըլթի լենք ինգյուն, բայց սասը շատ լավ ա, ութասուն փութը խրեգյ ենք տումալ:

Վերշը, հունց ա պըտահում, էտ ադերատ հըրցընում ըն իլի կարք ու կանոնները, վեր մեռնին՝ փողը ըդերին ա հըսնո՞ւմ, հըրսընքին փողը հերան ա հըսնո՞ւմ, նըշընտիրիթյին փողը հերան ա հըսնում, էտ բոլորը ադերը փըսակի-պանի փողերը գյիղմլիս ա ինում:

Նրանա հետի, թա հունց ա պըտահում, մին շանփանը եաը մըն քյուիրի խոխա մեռնում ա, էտ խովիին հերը կյամ ա, ասում ա: —Դե, ադեր, հինչ ըս ինք ոմիլու մըզանա, թա ասում ա: —Տասուն մանեթ ըմ ինք ոմիլու:

Թա ասում ա: —Լափ լավ կինի, եք խոխան թաղե:

Էտ աղերըտ եր ա կենում ավետարանը եր օնում քյամունմ։
Քյունինմ ա, վեր կարթում ա, հինչ ա՝ կարթում, էտ էլ խոխա
վըստեն ննջաւը ա իլալ, Ղարաբաղում էրկու հատ գյուղ կա ուրեմք
տիմաց, մընը Պանաձնը ա կոշվում, մընը՝ Սամձնը։ ՄՇեկ իրը թե
աղերը էտ ավետարանան կարթում ա, զե ավետարանան տառ ա
զյուղում, վեր կարթա, ասում ա. — Թյինամ Սամձնը, կյամ
Պանաձնը, Պանաձնըրից քյինամ Սամձնո՞ր... ժուղովուրթն ասում
են՝ մեր էն քյինա ադերն էլ կլթիս ինպիլիս չի իլալ տհենց պա-
ները. շան տղան էս հինչ լա՞վ կարթում ա:

Վերլը, էն ա տհեա կլալիս, վեր էտ քյիսիրին խոխան աղերը
տանում ա հինգիստումը թաղում, թըղիլիս կյամ տասսը մանեթը
ինք օնում, վեր էտ տասը մանեթը կնեկը գյուղում ա, վեր տա
մեռնող ի իլալ, պիտի զարկի ուրանց գյուղը, վեր տա կնգանը։
ՄՇեկ էտ աղերըտ մտածում ա, ասում ա հոռաց ա՞նեմ, վեր մին-
էրկու խոսք էլ իվիլցնեմ, վեր գոնե մին հենգ մանեթ էլ իվիլ ինք
օնեմ, էն Սամձնըն ան Պանաձնըրից պատառ իրգինըցնեմ, վեր
փող շատ ինք օնեմ, լիհա հենգ մանեթ էլ պահեմ իմ ջուրումըս
հորապահուստ, բա չէ՝ գյիղալավ իմ կնեկըս փողերը տանե, էս
հինչ կրա՞կ ա, ևս հինչ ա՞նեմ, հը։ Մտածում ա, մտածում, էրկու
խոսկ իվիլցնում։ Ըտեղ մին հրուատի խոխա յա մեռնում։ Էտ հա-
րուստը վեր կյամ ա ըդերին տանե, վեր ուրանց խոխան թաղի,
ասում ա. — Տե՛ր հայր, հինչ ը՞ս ինք ունելու

Ասում ա. — Դե տըսնըհենգ մանեթ ըմ ինք ունելու
թա ասում ա. — Վեր լավ երբես, հայլա քսանն եմ տալու

ՄՇեգ էս աղերըտ մտածում ա, վեր լավ երբի, համ էլ խոսկը
իվիլցնի, պատառ փող էվել ինք օնի, կնեգը գյիղալավէլ, վեր տըս-
նըհենգ ա, տասն ա: Էտ դարենմըտ էտ քյիսիրին խոխան վեր
մեռնում ա, էտ քյանիրըտ էլ եր ա կենում մըն հունի մհակ
եր օնում, քյունում մըղոկումը դալրագաղ ինոնմ, ասում ա. — Էտ
շան տղատ եթե տարբերություն տիրապէլ հըրուատին նաև քյիսիրին
խոխան թըղիլիս, տալու վեմ տրա քյալլամ-մալլան ճողը անեմ։

Վեր կյամ ա մղակումը կաղնում ա, էս աղերըտ՝ հըրուատի խո-
խան եր ըն օնում հանգիստը տընելի թըղելի ժամանակ
ետ ա տառնում, ասում ա. — Թյինամ Սամձնը, կյամ Պանաձնը,
Պանաձնըրից էլ քյինամ Տրապիզո՞նն..։ Տրապիզոն ըսիլիս մհակը
ճըկատին ա կյամ. — Շան տղա, պա մերը իս քյինաց վե՞լ Տրապի-
զոն։ Էտ քյանիրն ա ասում։ Տամ ա մհակավ տրա քյալլան ցրէ
տամ։ Ըգերին պիրում են վերլը, կըրլուը փեյին-մեյին տինում,
շալմա անում, տրա քյալլամ-մալլան կըպոտում, վերլը տինում են

իշխն լիրա, դարձում ձերան տոնը։ Կնեկը նստած գլուխ ընելիս
ա ինհամ, եշում ա տեսնում, վեր մին էս ա սեյիդ են պիրծն կյու-
լջիւը շալմա տռաված։ Կյամ ա տհն կյամ ձերնն մարթը։

—Ա՛ մարթ, էտ հինչ ա՞ պըտահալ։

Թա՞ լոռ ա պըտահալ, զահըրմար ա պըտահալ, պա ասիլ
լը՞ս, ա կնեկ, հալղածի հանգամանքը հունց ես պաղմեցի, կնգա-
նը պաղմում ա։

Թա բա. —Կրակը քեզ լիրա եր տառնա, ըստեղաս Տրապիզոն
քըսասում օրվա ճընապար ա, թոռն ի՞ր քյինում Տրապիզոն, քյա-
ցալ իր Սամձնը-Պանձնը, ընդեղան քյինա Աղղամ, թա հոր ի՞ր
քյինում Տրապիզոն, քեզ զարկալ ըմ Տրապիզոն, աշկըտ էլ ըն հա-
նալ, վեր ահենց են ըրալ։

